



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք.Արտաշատ

N 47/241-2019

31.10 2019թ.

ԹԻՆԱ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով և 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 16-ին «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Ա. Գոլեցյանի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարած ուսումնասիրության արդյունքները

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջը ոչ պատշաճ կատարելու՝ դպրոցի կանոնադրության 48-րդ կետի 13-րդ ենթակետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու համար «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Ա. Գոլեցյանի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Թինա Սամվելի Մարգարյանին հայտարարել նկատողություն:

Recoverable Signature

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Signed by: SARGSYAN GARIK 2811870695

Գ. ՍԱՐԳՅԱՆ